

**Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշումների  
իրավաբանական ուժը եւ դրանց կատարման պրակտիկայի որոշ հիմնահարցեր**

Զեկուցող՝ ՀՀ սահմանադրական դատարանի անդամ

Հրանտ ՆԱԶԱԲՅԱՆ

Ողջունելով խորհրդաժողովի մասնակիցներին նախ, ցանկանում եմ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի անունից շնորհավորել Մոլդովայի Հանրապետության սահմանադրական դատարանի կազմավորման 20-ամյակի կապակցությամբ, մաղթել նորանոր ձեռքբերումներ Սահմանադրության գերակայության ապահովման, սահմանադրական արդարադատության արդյունավետության բարձրացման ու ժողովրդավարության հետագա զարգացման դժվարին բայց եւ կենսական անհրաժեշտ գործում: Այս առումով ինչպես Մոլդովայի, այնպես էլ՝ Հայաստանի սահմանադրական դատարանների առջեւ ծառայած են միեւնույն մարտահրավերները:

Սահմանադրական արդարադատության մարմինների որոշումների իրավաբանական ուժի, առանձնահատկությունների եւ պետական այլ մարմինների կողմից դրանց կատարման հիմնախնդիրները բազմիցս քննարկման առարկա են հանդիսացել սահմանադրական արդարադատության արդյունավետության բարձրացմանը նվիրված միջազգային խորհրդաժողովներում, գիտական շրջանակներում: Այն մշտապես արդիական թեմա է՝ հատկապես երիտասարդ ժողովրդավարության երկրներում: Սահմանադրական վերահսկողությունն ինքնին անհնար է նույնիսկ տեսականորեն պատկերացնել, եթե իրավունքի ուժով հստակեցված չէ այն իրականացնող մարմնի որոշման իրավաբանական ուժը, կամ թե խոսել այդ գործառույթի արդյունավետության մասին, եթե կայացված որոշումները խիստ թերի կամ ընդհանրապես չեն կատարվում: Խոսելով նախ, հարցի իրավական կանոնակարգման տեսանկյունից, պետք է նշել, որ վաղուց հաստատագրված փաստ է այն իրողությունը, որ սահմանադրական մակարդակում որպես կանոն ամենուր որոշված են սահմանադրական դատարանների (կամ սահմանադրական վերահսկողություն իրականացնող այլ մարմինների) որոշումների իրավաբանական ուժը, դրանց կատարման պարտադիր լինելը: Նույնպիսի նորմատիվ դրույթներ պարունակում են նաեւ այդ մարմինների գործունեությունը կանոնակարգող օրենսդրական ակտերում: Սակայն, ի՞նչ է հուշում սահմանադրական արդարադատության հայաստանյան 20-ամյա փորձը, այն, որ սահմանադրական դատարանի որոշման իրավաբանական բնույթի եւ իրավակարգավորիչ ազդեցության

սահմանումը պարտադիր, սակայն ոչ բավարար պայման է Սահմանադրության գերակայությունը ապահովելու գործում: Բազմաթիվ են մարտահրավերները հատկապես դատարանի որոշումների անվերապահ կատարումն ապահովելու ուղղությամբ: Եվ ինչպես արդեն նշեցի, սահմանադրական արդարադատության միջազգային փորձի ուսումնասիրումն ինքնին փաստում է, որ այս կամ այն առանձնահատկությամբ, ընդգրկվածությամբ այդ հիմնախնդիրը գոյություն ունի ցանկացած երկրում, որն էլ օրինաչափորեն հանգեցնում է սահմանադրական վերահսկողության համակարգի կատարելագործման նոր միջոցների ու ձևերի ուսումնասիրմանն ու ներդրմանը:

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի ակտերի (որոշումների ու եզրակացությունների) իրավաբանական ուժը որոշված է գործող Սահմանադրության 102-րդ հոդվածում, համաձայն որի՝ դրանք վերջնական են եւ ուժի մեջ են մտնում հրապարակման պահից, այսինքն՝ անվիճելի են ու անբողոքարկելի: «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 61-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն, գործով ըստ էության ընդունված որոշումները պարտադիր են բոլոր պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց, ինչպես նաեւ ֆիզիկական ու իրավաբանական անձանց համար՝ Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում: Սահմանադրական դատարանի որոշումների իրավաբանական ուժի նորմատիվ կարգավորման հարցը լուծված է նաեւ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքում, համաձայն որի՝ օրենքները, ՀՀ Ազգային ժողովի որոշումները, ՀՀ Նախագահի հրամանագրերը, կարգադրությունները, ՀՀ կառավարության եւ վարչապետի որոշումները եւ այլն, այս ցանկը կարելի է շարունակել, չպետք է հակասեն սահմանադրական դատարանի որոշումներին (9-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ): Այսպիսով, կարելի է փաստել, որ Հայաստանի պարագայում, երկրում ժողովրդավարական համակարգի ներդրման սկզբնափուլում, սահմանադրական դատարանի որոշման իրավաբանական ուժի հարցը թե Սահմանադրության եւ թե օրենքի մակարդակներում ի սկզբանե ստացել է կլասիկ լուծում, այսինքն հաշվի է առնվել ինչպես սահմանադրական-արդարադատական միջազգային փորձը, այնպես էլ այն Հայաստանի Հանրապետությունում ներդնելու իրավաբաղաբական անհրաժեշտությունը:

Որպես սահմանադրական-վերահսկողական ակտեր, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշումներն առաջացնում են պարտադիր իրավական հետեւանքներ, որոնք իրենց բնույթով հանրային-իրավական են: Մասնավորապես, իրավական ակտերի՝ Սահմանադրությանը հակասելու վերաբերյալ սահմանադրական դատարանի որոշումներին անմիջականորեն հաջորդում է հանրային իշխանության իրավասու մարմնի իրավաստեղծ

գործունեությունը հասարակական տվյալ հարաբերության իրավակարգավորման ուղղությամբ, կամ առաջանում են նոր հանգամանքներ, որոնք հանգեցնում են օրենքով սահմանված կարգով դատական ակտերը վերանայելուն:

Սահմանադրական դատարանի որոշումները հրապարակման պահից ուժի մեջ մտնելու, այսինքն՝ իրավաբանական ուժ ստանալու ինստիտուտը, որպես կանոն, գործում է առանց բացառությունների, որն ըստ ՀՀ Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի սահմանադրաիրավական բովանդակության, ենթադրում է.

- սահմանադրական վեճն ըստ էության լուծվել է դատաքննության արդյունքում,
- որոշումն անշրջելի է եւ վերջնական,
- ընդունված որոշումը ենթակա է անհապաղ կատարման:

Սակայն, հայաստանյան պրակտիկայում սահմանադրական դատարանը որոշ գործերով կիրառել է կիրառում է նաեւ այսպես կոչված «տարածամկետման» ինստիտուտը, որը նախատեսված է ՀՀ Սահմանադրության վերը հիշատակված 102-րդ հոդվածի 3-րդ մասում: Նման դեպքերում խնդիրը հակասահմանադրական ճանաչված նորմատիվ ակտի (կամ դրա առանձին դրույթների) պայմանական եւ կարճաժամկետ գործելու մասին է՝ կապված բացառիկ այնպիսի հանգամանքների հետ, որպիսիք են հանրության համար ծանր հետեւանքները եւ իրավական անվտանգությունը: Հատկանշական է, որ այդպիսի հետեւանքների առաջացման հավանականությունը գուտ դատարանի մեկնաբանման կամ հիմնավորման խնդիր է: Այսպես, սահմանադրական դատարանը քննության առնելով ՀՀ քաղաքացիական դատավարության եւ Հողային օրենսգրքերի մի շարք հոդվածների սահմանադրականության հարցը իր որոշմամբ հիմնավորել է, որ այդ նորմերը հակասահմանադրական ճանաչվելու արդյունքում կառաջանա իրավակարգավորման բաց՝ վտանգելով բազմաթիվ իրավասուբյեկտների սահմանադրական իրավունքների իրացումը, հետեւաբար հետաձգել է այդ հոդվածների իրավաբանական ուժը կորցնելու ժամկետը: Համանման հիմնավորումներով Հայաստանի սահմանադրական դատարանը կայացրել է շուրջ 13 որոշումներ:

2005 թվականի սահմանադրական բարեփոխումների շրջանակներում Հայաստանի սահմանադրական արդարադատական պրակտիկայում ներդրվեց որոշումների վերանայման ինստիտուտը, համաձայն որի սահմանադրական դատարանի որոշումները կարող են վերանայվել, եթե,

- փոխվել է Սահմանադրության՝ տվյալ գործով կիրառված դրույթը,

- ի հայտ է եկել տվյալ գործով իրառված Սահմանադրության դրույթի այնպիսի նոր ընկալում, որի առկայությամբ նույն հարցի վերաբերյալ կարող է ընդունվել սահմանադրական դատարանի այլ որոշում, եւ եթե տվյալ հարց ունի սկզբունքային սահմանադրաիրավական նշանակություն: Հատկանշական է, որ այս կանոնը չի կարող գործել այնպիսի որոշումների առնչությամբ, որոնցով վիճարկվող նորմերը ճանաչվել են Սահմանադրությանը հակասող եւ անվավեր: Պետք է նաեւ նշեմ, որ Հայաստանի սահմանադրական դատարանի պրակտիկայում որոշումների վերանայման գործեր դեռեւս չեն քննվել:

Անդրադառնալով ՀՀ սահմանադրական դատարանի որոշումների կատարման պրակտիկայի խնդրին, կցանկանայի հատուկ նշել, որ այն ի սկզբանե գտնվել է դատարանի հատուկ ուշադրության կենտրոնում: «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի իրացման կարգով սահմանադրական դատարանը յուրաքանչյուր տարվա ավարտից հետո մեկ ամսվա ընթացքում հաղորդում է հրապարակում իր որոշումների կատարման վիճակի վերաբերյալ: Այն մեծաքանակ տպաքանակով ուղարկվում է Հանրապետության պետական եւ տեղական ինքնակառավարման բոլոր մարմիններին: Այդ հաղորդումներում դատարանը հանգամանորեն ներկայացնում է ընթացիկ տարում կայացված որոշումները, դրանցում արտահայտված իրավական դիրքորոշումները եւ նախանշում այն հիմնական ուղղությունները, որոնք անհրաժեշտ են սահմանադրական կարգի ու օրինականության ապահովման ուղղությամբ: Նման համապարփակ վերլուծությունը կարելու է նաեւ հասցեատեր սուբյեկտների մոտ սահմանադրական պատշաճ մշակույթ ձեւավորելու, մարդու, քաղաքացու իրավունքներն ու ազատություններն ըստ ամենայնի հարգելու եւ իրենց առջեւ դրված սահմանադրական կամ օրենքով նախանշված խնդիրներն արդյունավետ իրացնելու տեսանկյունից: Սակայն, նպատակ ունեւ ոչ թե հաստատագրելու վերոթվարկյալ խնդիրների կարելությունը, այլ՝ առաջին հերթին, ներկայացնելու սահմանադրական դատարանի որոշումների կատարման առավել խնդրահարույց մի քանի հարցեր, մասնավորապես, կապված.

- դատարանի որոշումների եզրափակիչ մասից անմիջականորեն բխող իրավակարգավորումներ նախաձեռնելու եւ իրացնելու հետ,

- դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները լիարժեք կյանքի կոչելու հետ,

- դատարանի որոշումներից բխող իրավակարգավորումներում իրավունքի գերակայության սկզբունքի երաշխավորման հետ:

Պետք է նշել, որ մի շարք դեպքերում, երբ սահմանադրական դատարանն իր որոշմամբ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր է ճանաչել վիճարկվող նորմը, որն ուղղակիորեն ենթադրում է իրավասու մարմնի (օրենսդիր կամ գործադիր մարմին) իրավա-ստեղծ գործունեություն, չի նախաձեռնվել որեւէ գործողություն: Այսպես, օրինակ անհատական դիմումի հիման վրա քննության առնելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 45.6-րդ հոդվածի 1-ին մասի սահմանադրականության հարցը, ՀՀ սահմանադրական դատարանն իր 18.04.2014թ. ՄԴՈ-1148 որոշմամբ որոշել է, որ այդ նորմն այն մասով ու մեկնաբանությամբ, որով արգելափակվում է ավելի բարձր աստիճանի մասնագիտական համարժեք որակավորում ունեցող անձի՝ փաստաբանական դպրոցի ունկնդիր դառնալու իրավունքը, հակասում է ՀՀ Սահմանադրության 1-ին, 3-րդ, 43-րդ հոդվածների պահանջներին: Հիշյալ որոշման պատճառաբանական մասում սահմանադրական դատարանն արձանագրել էր, որ կրթության ոլորտի մի շարք նորմատիվ ակտերում առկա չէ հստակ մոտեցում կրթության տարբեր աստիճանների իրավական բովանդակության, կրթության շարունակականության, կրեդիտային կուտակային համակարգի եւ համարժեք որակավորման ներդաշնակման եւ այդ ոլորտում միասնական չափորոշիչների հաստատման վերաբերյալ: Այդ կապակցությամբ դատարանի որոշման պատճառաբանական մասը պարունակում էր օրենսդիր եւ այլ մարմիններին առաջադրված խնդիր վերը հիշատակված խնդրի հստակ կանոնակարգման վերաբերյալ: Սակայն, ավելի ուշ, անդրադառնալով այդ որոշման կատարման ընթացքին, սահմանադրական դատարանն արձանագրեց, որ իրավակարգավորման վերաբերյալ հիշյալ հանձնարարականները չեն կատարվել: Համանման իրավիճակ արձանագրվեց նաեւ «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերի սահմանադրականությունը որոշելու վերաբերյալ գործով, երբ ՀՀ Ազգային ժողովին հասցեագրված հանձնարարականը՝ այդ օրենքում համապատասխան փոփոխություններ կատարելու վերաբերյալ մնացել էր անկատար (25.02.2014թ., ՄԴՈ-1140): Կամ, «Մաքսային օրենսգրքի 224-րդ հոդվածի սահմանադրականության հարցը որոշելիս (03.06.2014թ.), երբ հակասահմանադրական ճանաչվեց իրավական այն կարգավորումը համաձայն որի մաքսային մարմինն իրավասու էր տուգանքի, մաքսային վճարների գանձումն ապահովելու նպատակով, վերցնել ապրանքներ՝ անկախ դրանց սեփականության պատկանելիությունից եւ հաշվի չառնելով, որ իրավախախտման փաստը պայմանավորված է մեկ այլ սուբյեկտի վարքագծով: Այդ որոշումից բխող անհրաժեշտ իրավակարգավորումները, որոնք ՀՀ Ազգային ժողովի իրավասության ոլորտում են, նույնպես իրացված չեն: Նման օրինակները բազմաթիվ են: Խնդրի ուսումնասիրությունը վկայում է, որ օրինաստեղծ գործունեության բնագավառում սահմանադրական կարգապահության նման խախտումները պայմանավորված են ինստիտուցիոնալ կանոնակարգման բացակայությամբ, մասնավորապես, ինչպես

բազմիցս բարձրաձայնվել է ՀՀ սահմանադրական դատարանի կողմից «Ազգային ժողովի կանոնակարգ» օրենքում բացակայում են սահմանադրական դատարանի կողմից ընդունված որոշմամբ պայմանավորված պարտադիր բնույթի սահմանադրական ընթացակարգերի (օրենսդրական նախաձեռնության իրացում, դրա քննարկում եւ ընդունում) իրացման կարգն ու պայմանները:

Ինչ վերաբերում է սահմանադրական դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումների կենսագործման խնդրին, որը նույնպես, ընդհանուր գնահատմամբ դատարանի որոշումների կատարման կարելուագույն բաղադրիչ է, ապա պետք է արձանագրել, որ այդ դիրքորոշումների իրացման հայաստանյան պրակտիկան խնդրահարույց է հատկապես՝ դատական (ընդհանուր եւ մասնագիտացված) պրակտիկայում: Որպես ցայտուն օրինակ, կարելի է նշել նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման ինստիտուտի կիրառման պրակտիկայի վերաբերյալ սահմանադրական դատարանի որոշումները (ՄԴՈ-984, ՄԴՈ-1099, ՄԴՈ-1114 եւ այլն): Ուսումնասիրելով ձեւավորված իրավակիրառական պրակտիկան եւ օրենսդրական կարգավորումները, սահմանադրական դատարանն իր իրավական դիրքորոշումներով բազմիցս շեշտել է նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման ինստիտուտի կարելուությունը անձանց խախտված սահմանադրական կամ կոնվենցիոն իրավունքների վերականգնման գործում եւ ընդգծել է՝ այդ ինստիտուտն իր սահմանադրաիրավական բովանդակությանը համապատասխան կանոնակարգելու ու կիրառելու անհրաժեշտությունը, մասնավորապես օրենսդրին ու դատարաններին պարտավորեցնելով հաշվի առնել, որ «...նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայումն անխուսափելիորեն պետք է ipso facto հանգեցնի հակասահմանադրական նորմ կիրառած դատական ակտի եւ կոնվենցիոն իրավունքի խախտում թույլ տված դատական ակտի բեկանմանը»: Միաժամանակ, արձանագրելով, որ հիմնախնդիրը միայն վերը նշվածով անհրաժեշտ լուծում չի ստանում, սահմանադրական դատարանը բազմիցս կարելուրել է դատական պրակտիկայում անհրաժեշտաբար կիրառելի այն չափորոշիչները, որոնց առկայությամբ այդ ինստիտուտը կձառայի իր սահմանադրաիրավական նպատակներին: Սահմանադրական դատարանը նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման ինստիտուտի կիրառման պրակտիկային համապարփակ կերպով կրկին անդրադարձել է իր ՄԴՈ-1114 որոշմամբ, գնահատելով այն որպես հակասական եւ իրավունքի գերակայության սկզբունքին ոչ համարժեք:

Ուսումնասիրելով եւ գնահատելով սահմանադրական դատարանի որոշումների կատարման պրակտիկան մտահոգիչ պետք է համարել նաեւ իրավունքի գերակայության սկզբունքի ոչ լիարժեք ապահովման իրողությունը: Այդ խնդրի կարելուությանը ՀՀ սահմանադրական դատարանն անդրադարձել է մշտապես, նշելով,

որ Սահմանադրության գերակայության եւ անմիջական գործողության ապահովման նպատակով դատարանի որոշումների հիման վրա իրավական համակարգում կատարվող փոփոխությունները պետք է ոչ թե դրվագային բնույթ կրեն, այլ ընդգրկեն վերաբերելի իրավական հարաբերությունները կարգավորող եւ փոխկապակցված իրավակարգավորումների ողջ շղթան: Բացի այդ, ինչպես նշվել է սահմանադրական դատարանի որոշումների կատարման վիճակի վերաբերյալ տարեկան հաղորդումներում, մտահոգիչ է նաեւ այն հանգամանքը, որ Հայաստանում իրավական բարեփոխումներն ընթանում են սահմանադրական դատարանի որոշումների ընդունմանը ոչ համընթաց, ինչի արդյունքում ստեղծվում է մի իրավիճակ, երբ օրենսդրական բարեփոխումների ընթացքում դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումներին անդրադարձ է կատարվում տարիներ անց, ինչը բացասաբար է ազդում երկրում առկա սահմանադրական օրինականության մակարդակի վրա: Նման իրավիճակում հիմնախնդիրը կարող է լուծվել, եթե ՀՀ Սահմանադրության մակարդակով երաշխավորվի սահմանադրական դատարանի որոշումների լիարժեք կատարումը, ամրագրվի որպես սահմանադրական պարտականություն: Նորմատիվ պահանջ պետք է դառնա նաեւ դատարանի ընդունած որոշումների կատարման վիճակի վերաբերյալ տարեկան հաղորդումների քննարկումը եւ դրանում բարձրացված հարցերի վերաբերյալ պետական իշխանության մարմինների կողմից պարտադիր արձագանքը: Միաժամանակ, վաղուց հասունացել է Հայաստանում սահմանադրականության մշտադիտարկման արդյունավետ համակարգի արմատավորման անհրաժեշտությունը, որում պետական իշխանության իրավասու մարմինների ակտիվ դերի հետ մեկտեղ էական կլինի քաղաքացիական հասարակության մասնակցությունը, ինչն իր ծանրակշիռ ազդեցությունը կունենա սահմանադրական դատարանի որոշումների լիարժեք կատարման երաշխավորման ուղղությամբ: Այս եւ վերը նշված, ինչպես նաեւ Սահմանադրության գերակայության ապահովման ուղղությամբ ծառայած բազմաթիվ այլ խնդիրների արդյունավետ լուծման սահմանադրաիրավական ուղիներ նախանշելու եւ կյանքի կոչելու հարցում մեծ են սպասելիքները Հայաստանում դեռեւս 2013 թվականից մեկնարկված սահմանադրական բարեփոխումների շրջանակներում: Առաջարկված փոփոխությունները կոչված են լինելու նաեւ երաշխավորել սահմանադրական վերահսկողության եւ հսկողության այնպիսի համակարգ, որում իրենց ինստիտուցիոնալ հստակ դերը կատանձնեն քաղաքական համակարգի բոլոր սուբյեկտները:

Շնորհակալություն ուշադրության համար: